

## ՖՈԼԿԼՕՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Խ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆԻ

Արդէն քանի տարի է միտք էր ծագել իբրև յոյժ անհրա-  
ժեշտ բան՝ կազմել Ֆոլկլօրի միջազգային դաշնակցութիւն, որի  
նպատակն է լինելու օգնել այն բոլոր հետազոտողներին, որոնք  
կրկամենան օգտուել կամ որոնել օտար երկրներում և օտար  
լեզուներով լոյս տեսած կարևոր նիւթերը Ֆոլկլօրի վերաբերմամբ:  
Այդ անբաժանելիութիւնը վերջերս աւելի ևս զգալ էր տալիս իւր  
մասին, երբ նկատի առնենք, թէ որքան մեծ ծաւալ էին ստացած  
ամենուրեք հաւաքած նիւթերը և թէ ինչ դժուարութիւն է ներ-  
կայացնում այդ զանազան լեզուներով ժողոված նիւթերից օգ-  
տւելը: Ուստի Հելսինգֆօրսի համալսարանի պրոֆեսոր Կրօնը և  
Կոպէնհագէնի պրոֆ. Ա. Օլրիկը ձեռնարկեց եղան այդ նպա-  
տակն իրագործելու և յաջողեցան սկզբում հետաքրքրել այդ  
հարցով Ալանդիական գիտնականներին ու Ֆոլկլօրիստներին:  
Վերոյիշեալ դաշնակցութեան հիմնադիրների կարծիքով՝ իւրա-  
քանչիւր երկրում, նոյն իսկ նահանգում, որը իր ազգագրական  
բնոյթով մի ամբողջութիւն է ներկայացնում, պիտի հիմնուեն  
պաշտօնական կօմիտեաներ, որոնք միջնորդ են հանդիսանալու  
միջազգային դաշնակցութեանը մասնակցող ֆոլկլօրիստների միջև:  
Այսպէս ձեռնարկեցին զործունէութիւնը շուտով մեծ համակրանք  
գտաւ նաև Գերմանիայում և Աւստրիայում:

Երկար և լուրջ փոխադարձ բանակցութիւնների հետևանքն  
եղաւ Ֆոլկլօրիստների դաշնակցութեան աշխատանքների մանրա-  
մասն ծրագրի մշակումն: Ակնյայտնի գիտնականներից ու ֆոլ-  
կլօրիստներից շատերը համաձայնութիւն տուին դաշնակցութեան  
աշխատանքներին ամենամօտ մասնակցութիւն ունենալու: Այսպէս  
օրինակ՝ պրոֆ. Հաուֆէնը Պրագայում կազմակերպել է կօմիտեա  
ցուցադրելու գերման—չեխական բոլոր նիւթերը, Բօլտէ և  
Րէդիգէր պրոֆեսորները նոյնը արին Բերլինում և այլն այլն:

Այսպիսով Արևմտեան Եւրոպայում ֆոլկլօրիստների փոխա-  
դարձ օգնութիւնն աստիճանօրէն իրականութիւն է գտնում  
չեանքում և այդ ուղղութեամբ արդէն որոշ փորձեր են եղել  
թեթեւացնելու ֆոլկլօրիստների գիտական պարապմունքները:

Ֆուլկլորիստների միջազգային ֆեդերացիան, շնորհիվ ֆինլանդական Ակադեմիայի, հնարաւորութիւն է գտել նաև ձեռնարկել յատուկ օրգանի հրատարակութեանը, «Communications», որի առաջին հատորը լոյս է տեսել «Communications-ի ծրագիրն է 1) ֆուլկլորական նիւթերի տեսութիւնը, 2) յատուկ ֆուլկլորական զրացուցակներ, 3) որևէ մի հեքիաթի զանազան վարիանտների համապատումն. 4) մետաֆորոգիական հարցեր:

Զնայած մի քանի թերութիւններին, որոնք սովորական են ու անխուսափելի իւրաքանչիւր նոր գործում, այնուամենայնիւ ֆեդերացիայի հիմնարկութեան զաղափարն ըստ ամենայնի արժանի է պահանաւութեան ու խրախուսանքի: Ծանկալի էր, որ այդ զաղափարն իրականանար նաև Ռուսաստանում, որը իւր լայնածաւալ տարածութեան վրայ բովանդակում է այնքան հարուստ ազգագրական նիւթեր: Այդ ուղղութեամբ արդէն որոշ փորձեր եղել են, թէև ոչ բուն Ռուսաստանում: Իւրեւում (Նախկին Դորպատում) դոկտօր Կալասը պրօֆ. Կրօնի հրաւերին հետևելով հիմնում է էսոսոնական գրական ընկերութեան կից ֆուլկլորային կոմիտեա: Ռուսական Աշխարհագրական ընկերութիւնն էլ Պետերբուրգում այդ հարցն արդէն արծարծել է, բայց տակաւին գործնական իրականութիւն չէ ստացել ֆեդերացիայի կոմիտեայի կազմակերպումն:

Բայց և այնպէս իւր օրգան՝ «Живая Старина»-յի վերջին հատորում գտնում ենք ֆուլկլորիստական ֆեդերացիայի գլխաւոր խնդիրներից մէկի կատարումն, այն է պ. Սմիրնովը սկսել է կազմել Աշխարհագրական ընկերութեան գիւմանում պահուած հարուստ ֆուլկլորային նիւթերի սխտեմատիկ նկարագիրը: Նմանապէս այդ հարցն արծարծուել է և հաւանօրէն մօտիկ ապագայում կ'իրականանայ նաև Մոսկուայի Ազգարական բաժնին կից, որտեղ Վ. Թ. Միլլերի առաջարկի համաձայն կազմակերպուել է «Ժողովրդական բանահիւսութեան յանձնաժողով» որ նպատակ է դրել ցուցակագրելու ռուս լեզուով լոյս տեսած ու ժողոված ֆուլկլորային նիւթերի ամբողջ պաշարը:

Ի հարկէ միայն Պետերբուրգն ու Մոսկուան շատ քիչ են և անձեռնհաս Ռուսաստանի ամբողջ տարածութեան ազգագրական նիւթերը կանոնաւորելու և ցուցակագրելու: Այդ նպատակի յաջող իրականացման համար անհրաժեշտ է, որ միւս ուսուական խոշոր կէտերում էլ կազմակերպուեն նոյն օրինակ կոմիտեաներ:

Այդ տեսակէտից խիստ կարևոր է Կովկասի մասնակցութիւնը, մի երկրի, որը ազգագրական տեսակէտից մի բացառիկ տեղ է բռնում և այնքան անսպառ, հարուստ նիւթ պարունա-

կուս, Մանաւանդ պէտք է ուշադրութեան առնենք այդ հարցը մենք հայերս, երբ մտաբերենք, թէ ինչ հարուստ ժողովրդական բանահիւսութեան պաշար ունենք, որ ոչ միայն տակաւին չէ ժողոված լիտկատար կերպով, այլ և մատնուած է կորուստի վտանգին ժամանակի ու քաղաքակրթութեան նոր ակիքների յորձանքներից։ Մեր բանասէր ֆօլկլօրիստներին անհրաժեշտ է շտապել ու առանց ժամանակ կորցնելու մի կողմից՝ ժողովել աւելի մեծ չափերով ու ծրագրով ժողովրդի բանահիւսութեան նիւթերը և ֆնացած բեկորները և միւս կողմից՝ որոշ սխտեմատիկ ցուցակի (КАТАЛОГ) ենթարկել այդ բոլորը։ Այս դէպքում մենք հասած կը լինենք երկու նպատակի, այն է կիրականացնենք միջազգային ֆօլկլօրիստների ֆեդերացիայի գլխաւոր նպատակներից մէկը, ծանօթացնելով եւրոպական բանասէրներին հայ բանահիւսութեան հետ և հնարաւորութիւն տալով նրանց գիտականօրէն օգտուելու նաև հայ ֆօլկլօրիստական հարստութիւնից և ապա ինքներս էլ փրկած և ի մի հաւաքած կը լինենք այն ցիր ու ցան հղած հայ ֆօլկլօրային նիւթերը ու ամբարած նոր նիւթեր, ազատելով այն ապագայի անփթութիւնից ու կորուստի վտանգից։

Այս վերջին հանգամանքում, մեր կարծիքով, մեծ ծառայութիւն մատուցած կը լինէր Հայոց Ազգագրական ընկերութիւնը, եթէ սա ձեռնարկէր մեր արծարծած առաջարկների լուծման։ Հայոց Ազգագրական ընկերութիւնը մեր մէջ միակ հիմնարկութիւնն է, որ ձեռնհաս է իրականացնելու որոշ ծրագրով ու սխտեմատիկ աշխատանքով այն նպատակները, որ նա առաջադրել է ֆօլկլօրիստների միջազգային ֆեդերացիան և մենք ցանկանում ենք իւր կողմից ընդ առաջ գնար վերջինիս՝ պարզելով փոխադարձ աշխատակցութեան ձեռքը։